«ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆ» ԵԶՐՈՒՅԹԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Բանալի բառեր - «Հարավային Ադրբեջան», ազգայնական, քարոզչություն, համաթուրքական, ռազմավարություն, տարածքային պահանջներ, հակահիրանական, ադրբեջանախոս, անջատողականություն։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1918 թ. Օսմանյան Թուրքիայի ձեռամբ Արևելյան Այսրկովկասում թյուրքական նոր պետության ստեղծումը և «Ադրբեջան» կանխամտածված անվանադրությունը նպատակաուղղված էր բացառապես Իրանի նույնանուն երկրամասի նկատմամբ տարածքային հավակնությունների հիմնավորմանը և պանթուրքիզմի ծրագրերի իրականացմանը։ Ակադեմիկոս Վ. Բարտոլդը այդ կապակցությամբ գրում է. «Ադրբեջան եզրույթն ընդունվեց, որովհետև, երբ հռչակվեց Ադրբեջանական հանրապետությունը, ենթադրվում էր, որ իրանական և այդ Ադրբեջանը կկազմեն մեկ ամբողջություն…Այդ հիմքի վրա ընդունվեց Ադրբեջան անունը»[1]։

Ադրբեջան անունը կրող արհեստածին պետությունը ստեղծման օրվանից ի վեր խնդիր է դրել իր առջև հիմնավորել աշխարհագրական անվանումների շփոթը և ապացուցել Իրանի հյուսիսարևմտյան երկրամասի՝ Ատրպատական-Ադրբեջանի տարածքների նկատմամբ իրավազորությունն ու թյուրքական պետության ստեղծման պատմական իրավունքը։ Դա պայմանավորված է պատմություն չունեցող այդ նոր պետության քոչվոր բնակչության՝ կովկասյան թյուրքերի համար հայրենիքի փնտրտուքով։ Եկվորներ լինելու անհերքելի իրողությունը խոչընդոտ էր նրանց տարածքային հավակնությունների ճանապարհին։ Ուստի այդ դիտանկյունից չափազանց նպատակահարմար էր յուրացնել Այսրկովկասի հարավում տակավին մ. թ. շատ առաջ գոյություն ունեցած ռազմական և

[1] Տե՛ս **Бартольд В. В.,** Сочинения, т. 2, ч. 1, Москва 1963, стр. 703.

մշակութային առումներով ուժեղ Մարաստան պետության պատմությունը, մանավանդ, որ մ. թ. 16-րդ դարից սկսած, թյուրքական ցեղերի ներխուժումների հետևանքով տեղական բնակչությանը պարտադրվել էր թյուրքերեն լեզուն:

«Հարավային Ադրբեջան» հորինված եզրույթը խորհրդային կենտրոնական իշխանությունների խրախուսմամբ, քաղաքական նկատառումներով, 1930-ական թվականների վերջերից շրջանառության մեջ դրվեց Ադրբեջանի ղեկավարության կողմից: «Մեդիայի նստակյաց հնագույն բնակչությունից ադրբեջանցիների ծագումը հրահանգավորվել է Ադրբեջանի իշխանությունների կողմից և գիտնականներին մնում էր միայն հիմնավորելու այդ գաղափարը»[1]: Համաշխարհային հեղափոխության գաղափարները Արևելքի մուսուլմանական երկրներում տարածելու նպատակով, ԽՍՀՄ նվաճողական նկրտումները քողարկելուն և հիմնավորելուն ուղղված այս մտահղացումն առարկայնորեն համընկնում էր Իրանի հյուսիս-արևմտյան երկրամասին տիրելու Ադրբեջանի Ժողովրդական Հանրապետության[2] երազանքին:

Պատմականորեն գոյություն չունեցող «ադրբեջանցի» կոչվող ժողովուրդը այսօր էլ ունի ինքնության լուրջ դեֆիցիտ: Պատահական չէ, որ Ադրբեջանի բոլոր ժամանակների իշխանությունների կողմից ցանկացած պատեհ առիթ ու հանգամանք օգտագործվել է այդ բացը լրացնելու ճանապարհով կյանքի կոչել «Մեծ Ադրբեջանի» գաղափարը, որում առանցքային նշանակություն է տրվում իրանական Ադրբեջանի թյուրքախոս բնակչության և ադրբեջանցիների էթնիկ նույնականացմանը: Հետհամայնավարական Ադրբեջանը իր զավթողական նպատակներին հետամուտ

---

[1] Տե՛ս **Шнирельман,** Войны памяти, Мифы, иденчность и политика в Закавказье, ИКЦ «Академкнига, М., 2003, с. 134.

[2] Ադրբեջանական պատմագրության մեջ ներկայումս 1918-1920թթ. հանրապետությունը անվանվում է «Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետություն»: Այդ հնարքը քարոզչական նպատակներ է հետապնդում, որով փորձ է արվում «հիմնավորելու» այն թեզը, թե իբրև ադրբեջանցիները, որպես մուսուլմաններ, իսլամական պետությունների մեջ եղել են առաջինը, ովքեր ստեղծել են «դեմոկրատական» (ժողովրդավարական) հանրապետություն: Մինչդեռ այդ անվանման մեջ ադրբեջաներեն «Xalq» բառը նշանակում է ժողովուրդ, հետևապես՝ պետք է լինի «Ադրբեջանի Ժողովրդական» և ոչ թե ժողովրդավարական հանրապետություն, մանավանդ, որ Ադրբեջանի Հանրապետությունում ժողովրդավարությունը ընդամենը իմիտացիա է թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության առումներով: Դրա անհերքելի վկայությունն են Արցախի Հանրապետության խաղաղ բնակչության նկատմամբ իրականացված 44-օրյա ագրեսիան և ահաբեկչական պատերազմը, պատերազմից երկու տարի անց հայ ռազմագերին չվերադարձնելը, ՀՀ ինքնիշխան տարածք ներխուժումները, ինչպես նաև մարդու իրավունքների և միջազգային բազմաթիվ հանրահռչակ պարտավորությունների անտեսումն ու ոտնահարումները:

կրկին քաղաքական շահարկումների առիթ է ծառայեցնում այսպես կոչված «Հարավային Ադրբեջանի» մտացածին հիմնահարցը՝ լծորդելով այն աշխարհաքաղաքական նոր վերադասավորումներին: Ատրպատականում հակահիրանական անջատողական գաղափարների տարածմանը մեծապես նպաստում են Ադրբեջանի հանրապետության քարոզչությունն ու թուրքական գաղտնի ծառայությունների քայքայիչ գործողությունները:

ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ 1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ 1990-ԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ ԻՐԱՆ - ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1980-ական թթ. Խորհրդային Ադրբեջանում սկիզբ առած ազգայնական շարժմամբ կրկին օրակարգ մտավ «Հարավային Ադրբեջանի» գաղափարը: Ադրբեջանի Ազգային ճակատի (ԱԺՃ) գործիչները պարբերաբար բարձրացնում էին այդ հարցը՝ բորբոքված ամբոխին առաջնորդելով Իրանի և Խորհրդային Ադրբեջանի սահմանային արգելապատնեշները ոչնչացնելու:

1989 թվականի դեկտեմբերի 4-ին Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում սահմանին մոտեցած բնակիչների հանրահավաքում հնչում էր «Հարավային և Հյուսիսային Ադրբեջանի միավորում» կոչը: Հավաքը շուտով ցրվեց, սակայն դեկտեմբերի 12-ին նույնը կրկնվեց: Ի վերջո, դեկտեմբերի վերջին սահմանապահները վերջնագիր ստացան Նախիջևանի ժողովրդական ճակատից, ըստ որի մինչև 1989 թվականի դեկտեմբերի 31-ը պետք է վերացվեին սահմանի բոլոր արգելքները[1]:

ԱԺՃ-ն ակտիվորեն պատրաստվում էր ոչնչացնել սահմանը: Դրա գլխավոր կազմակերպիչը Նեյմաթ Փանահովն էր, ով դրդել էր Նախիջևանի հասարակ բնակիչներին գնալ պետական սահման և քանդել ամրությունները[2]:

«Կոմսոմոլսկայա պրավդան» այդ օրերին գրում էր, անկարգությունները «ոչ միայն տապալել էին ինժեներական կառույցները, այլև ընկած սյուները բեռնել են իրենց մեքենաների մեջ»: Խռովարարները քանդել և ավերել էին աշտարակներ, սահմանային նշաններ, էլեկտրական ազդանշաններ: Ջուղայի շրջանում տեղի բնակիչները եկել էին սահմանամերձ գոտում գտնվող հին հայկական գերեզմանատուն, ուր հաշվում է ա-

---

[1] «Разожгли костры»: почему азербайджанцы прорвали границу СССР https://www.gazeta.ru /science/2019/12/31_a_12892628.shtml (մուտք՝ 08.02.22)

[2] Տե՛ս նույն տեղում:

վելի քան 6 հազար խաչքար և սկսել ավերել այն: Տեղական սահմանապահ ջոկատի շարքային Լեոնիդ Կորզարենկոն բացատրական գրառման մեջ գրել է, որ «տեսել է, թե ինչպես են գերեզմանոցում խաչքարեր փորել ու ջարդել»[1]: Նմանատիպ վայրագությունները, որոնք մշակութային ցեղասպանության դասական դրսևորումներ են, Ադրբեջանում մշտապես եղել են պետականորեն խրախուսվող և կազմակերպվող իրողություններ և անթաքույց շարունակվում են այսօր:

Խորհրդային Ադրբեջանի անկախության հռչակումից (1991թ.) հետո նոր փուլ սկսվեց իրանա-ադրբեջանական հարաբերությունների պատմության մեջ, որն արդեն բնութագրվում է Թեհրանի և Բաքվի միջպետական հարաբերություններով: 1991 թ. դեկտեմբերի 25-ին Իրանն առաջիններից էր, որ ճանաչեց Ադրբեջանի հանրապետության անկախությունը, իսկ որոշ ժամանակ անց Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովն իր առաջին պաշտոնական այցը կատարեց Թեհրան[2]: Չնայած արտաքուստ բնականոն հարաբերություններին, Ադրբեջան-Իրան ավանդական-պատմական խնդիրները մնացին՝ համալրվելով նոր քաղաքական բովանդակությամբ:

1991 թ. Իրանում և արտերկրում հրատարակվող պարսկալեզու թերթերում տեղ գտած հոդվածներն արտահայտում էին իրանցիների մտահոգությունն ու տագնապը: Ադրբեջանի ազատագրման 45-ամյակին նվիրված Լոնդոնում հրատարակվող «Քեյհան» շաբաթաթերթի հատուկ թողարկման մեջ զետեղված Ռեզվանիի հոդվածում առկա էր նույն տագնապը: Ռեզվանին հարց էր տալիս, թե արդյո՞ք ներկա իրադարձությունները Իրանական Ադրբեջանի փոթորկահույզ պատմության մի նոր գլուխ չեն բացում: Նա անդրադառնում էր Ադրբեջանի Առան անվանմանը՝ նշելով, որ ժամանակին նույնիսկ որոշել էին անվանել Խորհրդային Առան: Ռեզվանին Իրանի իսլամական վարչակարգի հակառակորդն ու ընդդիմախոսը լինելով էր, նշում էր, որ, միևնույն է պաշտպանում են իսլամական վարչակարգի որդեգրած քաղաքականությունը[3]:

Խորհրդային Միության փլուզումից հետո առաջին տարում բացվեցին սահմանները և երկու կողմերի հարյուրավոր ընտանիքներ սկսեցին ակտիվորեն այցելել միմյանց: Երկու երկրների ադրբեջանցիների հարաբերություններն ընդլայնվում էին բոլոր առումներով: Ի սկզբանե Իրանի

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս **Юнусов А.,** Азербайджано-иранские отношения и проблем региональной безопасности на Кавказе// Пранстанство и время вмировой политике и международных отношенияш: матриалы 4 Конвента РАМИ Т. В.: Новые тенденции в мировой политике/ под, ред. В. В. Дегоева-С.83-118 (рус.) Аршивировано 8 августа 2011года.

[3] «Ազգ» օրաթերթ, 25.12.1991:

իշխանությունները ողջունում էին շփումները սահմանի երկու կողմերում՝ հույս ունենալով տարածել շիական ազդեցությունը Ադրբեջանի Հանրապետությունում:

Սակայն շուտով Իրանի իշխանությունները հասկացան, որ Ադրբեջանում կրոնական քարոզչությունը հետապնդվում է ադրբեջանական կառավարության կողմից: 1992 թ. ի տարբերություն Աֆղանստանից և Իրաքից փախստականների նկատմամբ իրենց քաղաքականության, Իրանի իշխանությունները հրաժարվեցին ընդունել ադրբեջանցի փախստականներին, ովքեր փախչում էին Հայաստանի հետ ռազմական գործողությունների շրջաններից՝ վախենալով փախստականների և Իրանի ադրբեջանցիների միջև ինտենսիվ շփումից[1]:

Այազ Մութալիբովի ժամանակ Իրանի հետ կապերը բավական բարենպաստ էին: Ա.Մութալիբովին հաջորդած պանթուրքիզմի ջատագով Ա. Էլչիբեյը բացահայտ խոսում էր «Հարավային Ադրբեջանի» մասին, քննադատում էր Իրանի իշխանություններին և աջակցում Իսրայելին: Ա. Էլչիբեյի առաջին հայտարարություններից մեկն այն էր, որ Ռուսաստանը և Իրանը սպառնալիք են Ադրբեջանի անվտանգության համար, ուստի Բաքուն պետք է դաշինքի մեջ մտնի Թուրքիայի և ԱՄՆ-ի, ինչպես նաև Արևմուտքի այլ տերությունների հետ: Էլչիբեյը փորձում էր համոզել, որ «Ադրբեջանը թուրք և ամերիկացի բարեկամների օգնությամբ կվերածվի տարածաշրջանի ամենազարգացած երկրի»[2]: Էլչիբեյի կառավարությունը հանդես եկավ ռազմաշունչ ծավալապաշտական հայտարարություններով ադրբեջանցիների հայրենիքի «գերության մեջ գտնվող մասը»՝ Իրանական Ադրբեջանը «ազատագրելու» և «երկու Ադրբեջանների միավորման» վերաբերյալ: ԱԺՃ-ի ծրագրի մեջ մտցվեց հատուկ կետ այսպես կոչված «Հարավային Ադրբեջանը» նորանկախ Ադրբեջանի հանրապետությանը միացնելու անհրաժեշտության մասին: 1993թ. մարտին թուրքական «Թյուրքիշ թայմս» թերթին տված հարցազրույցում Էլչիբեյը նշել է. «Իրանն ապագայում կմասնատվի, նրա տարածքում կստեղծվեն հինգ՝ քրդերի, բելուջների, արաբների, ֆարսերի և թուրքերի երկրներ: Ողջ Ադրբեջանը միասնական կդառնա և ծնունդ կառնի 40 միլիոն ազերի բնակչությամբ երկիր»[3]:

---

[1] **Сажин В.,** Иранский Азербайджан - история и политика https://interaffairs.ru/news/-show/32232 (մուտք՝ 17.02.22)

[2] **Բայբուրդյան Վ.,** Իրան-Ադրբեջան. հարևաններ թե աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXII), էջ 10 Եր., 2003, էջ: http://serials.flib.sci.am/openreader/arevel_ jogh_ 22/book/Binder1.pdf (մուտք՝ 26.03.22)

[3] Տե՛ս **Բեգիջանյան Է.,** Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Երևան, 2001, էջ 108::

Թեհրանը հատկապես մտահոգված էր Բաքվի քարոզչության հետևանքով Իրանական Ադրբեջանում ապակայունացման հնարավորությունից: Իսկ դրա նախանշանները դրսևորվեցին 1993 թ. ապրիլի 13-ին Թեհրանում: Այդ օրը Թեհրանի համալսարանի ազերի ուսանողությունը, այդ թվում նաև Բաքվից Իրան եկած ադրբեջանցիները, Թեհրանի պետական համալսարանի տարածքում կազմակերպեցին խոշոր հանրահավաք, որտեղ Քարվաճառում ԼՂՀ ուժերի կողմից վերահսկողություն հաստատելու կապակցությամբ հնչեցին հակահայկական ճառեր ու կոչեր: Հանրահավաքի մասնակիցները այնուհետև քայլարշավ կազմակերպեցին դեպի Իրանում ՀՀ դեսպանատուն: Ամբոխը այրեց ՀՀ պետական դրոշը, սկսեց քարկոծել դեսպանության շենքը՝ փորձելով ներխուժել ներս: Իրանական կառավարությունը անվտանգության ուժերի և զորքի օգնությամբ ցրեց հանրահավաքի մասնակիցներին: Հաջորդ օրը, ապրիլի 14-ին, Իրանի արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին ուղերձով դիմեց Հայաստանի կառավարությանը, մտահոգություն հայտնելով «իրադարձությունների զարգացման այդօրինակ ընթացքի առնչությամբ»: Ուղերձում կոչ էր արվում հայկական ուժերը դուրս բերել «Ադրբեջանի գրավյալ տարածքներից» և Ղարաբաղի խնդիրը լուծել քաղաքական ճանապարհով: Իրանի կառավարության համաձայնությամբ և ԱԺՃ-ի խնդրանքով ստեղծվեց ադրբեջանա-իրանական պաշտպանական միացյալ շտաբ, որի շրջանակներում Թավրիզի և Արդաբիլի գեներալներն օգնում էին իրենց ադրբեջանցի եղբայրներին՝ կանխելու հայկական ագրեսիան[1]: Իրանի նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին Հայաստանի կառավարությանը ուղղված նամակում քննադատում էր նրա ղարաբաղյան քաղաքականությունը: Ինչպես նշում է Է.Բեգիջանյանը Իրանի նախագահը այդ քայլով նպատակ ուներ իսլամական աշխարհին ցույց տալ, որ, չնայած Էլչիբեյի համաթուրքական և հակաիրանական քաղաքականությանը, Թեհրանն Ադրբեջանը դիտում է իբրև մահմեդական երկիր և պաշտպանում է նրա շահերը»[2]:

Այսպիսով հետխորհրդային տարիներին Ադրբեջանի քաղաքական շահարկումների հետևանքով «Հարավային Ադրբեջանի» հիմնախնդիրը ոչ միայն կրկին մտավ Ադրբեջան-Իրան արտաքին քաղաքական հարաբերությունների օրակարգ, այլև միջազգայնացվեց:

---

[1] Տե՛ս Представитель аятоллы Хаменеи: В ходе Карабахской войны мы автокалоннами поставляли Азербайджану вооружение (рус.) SalamNews. (9 мая 2011.) Архивировано 14 июня 2022 года.

[2] Տե՛ս նույն տեղում:

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԵՅԴԱՐ ԵՎ ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ինչպես Հեյդար, այնպես էլ Իլհամ Ալիևը նշել են, որ իրենց նախորդների համեմատությամբ վարում են տարբեր քաղաքականություն: Սակայն, Իրանական Ադրբեջանի հարցում շարունակվող խնդիրների նկատմամբ քաղաքականությունը նույն է: Հ.Ալիևի վարած արտաքին քաղաքականությանը նվիրված «Աշխարհի դիվանագիտությունը» գրքում նշվում է, «Իսլամ, քաղաքականություն, նավթ՝ սրանք են Ադրբեջանի և նրա հարավային հարևանի միջև շփման հիմնական կետերը; «Հարավային ուղղություն նաև նշանակում է Ադրբեջանի վերադարձը իսլամական աշխարհ»[1]:

Ալիևները թեև հայտարարում էին, որ չեն պաշտպանում «Հարավային Ադրբեջանի» ազգային-ազատագրական և Միացյալ ադրբեջանական շարժումը, բայց հենց այս տարիներին Ադրբեջանի պատմության 5-րդ դասարանի դասագրքի շապիկին պատկերվեց Ադրբեջանական դրոշը, որը ծածանվում է Իրանական Ադրբեջանի և Ադրբեջանական Հանրապետության քարտեզի վրա:

1994 թվականին Վաշինգտոնի ճնշման ներքո Բաքուն հրաժարվեց ընդգրկել Թեհրանին զարգացման միջազգային կոնսորցիումի մասնակիցների շարքում, որոնք պետք է շահագործեին նավթի և գազի հանքավայրերը Կասպից ծովում: Երկու տարի անց հանրապետությունից հեռացվեցին իրանական գրեթե բոլոր կրոնական, մարդասիրական և հասարակական կազմակերպությունները: Շուտով ձերբակալվեցին և դատապարտվեցին Ադրբեջանի Իսլամական կուսակցության անդամները՝ Իրանի օգտին լրտեսության մեղադրանքով: Ադրբեջանական իշխանություններին միացան նաև ադրբեջանական սփյուռքի ներկայացուցիչները: 1997 թվականից անցկացվող համաշխարհային կոնգրեսներում սկսվեց պարբերաբար բարձրացվել Իրանում ապրող ադրբեջանցիների հիմնահարցը[2]:

Իրանի հետ հարաբերություններում «Հարավային Ադրբեջան»-ի հիմնախնդրին զուգահեռ մեկ այլ լուրջ խնդիր էր Կասպից ծովի կարգավիճակի և էներգետիկ ռեսուրսների հարցը: 2001 թ. հուլիսին Ադրբեջանն ու Իրանը հայտնվեցին պատերազմի շեմին. Իրանական կործանիչներն ու ռազմածովային նավերը պարբերաբար խոչընդոտում էին սահմանամերձ

---

[1] Տե՛ս **Крутов А.,** Азербайджан-Иран, Пока проблемы в отношениях соседей больше, чем решений, Независимый Азербайджан, Новые орентиры, том 2, Москва, 2000, С. 298.

[2] Տե՛ս **Юнусов А.**, Азербайджан между Америкой и Ираном, №3 2006 Май/Июнь https://globalaffairs.ru/articles/azerbajdzhan-mezhdu-amerikoj-i-iranom/ (մուտք՝ 04.03.22)

նավթահանքերի շահագործմանը. 2003 թվականի օգոստոսին Թեհրանը Բաքվին մեղադրեց Կասպից ծովի ռազմականացման մեջ: Պատճառն ադրբեջանա-ամերիկյան համատեղ ռազմածովային ուժերի զորավարժություններն էին՝ նավթի և գազի օֆշորային հարթակները ահաբեկիչներից պաշտպանելու համար: Զորավարժություններին մասնակցում էին ԱՄՆ 18 զինծառայող, երկու մարտական ուղղաթիռ և երկու ադրբեջանական պարեկային նավ[1]:

Ի.Ալիևի նախագահության տարիներին «Հարավային Ադրբեջանի» թեման լայնորեն սկսեց շրջանառվել Ադրբեջանի քաղաքական, հասարակական, գիտական շրջանակներում՝ ընդ որում նաև արևմուտքի հակաիրանական ռազմավարության համատեքստում: Պատահական չէ, որ Պենտագոնի ղեկավարի խորհրդական Ռիչարդ Փերլը Իրանը համեմատել էր «կավե ոտքերով հսկայի» հետ և նշել, որ պետք է աջակցել խռովարար ուսանողներին, ազգայնական շարժմանը և թագավորամետ ուժերին, որոնք էլ վերջ կտան այաթոլաների իշխանությանը[2]:

Օտարերկրյա պետությունները ակտիվորեն օգտագործում են բնակչության տարբեր շերտերի էթնիկ տարբերությունները և դժգոհությունները, որոնց համար պարսկերենը մայրենի լեզու չէ: Հիշյալ էթնիկ խմբերը օգտագործվում են որպես միջազգային քաղաքականության լծակ: Ամերիկյան իշխանությունները չափազանց ջերմ ընդունելություն են ցուցաբերում ընդդիմադիր գործիչ Չեղրեղանլիի այցերին ԱՄՆ: Վերջինս այցելում է ոչ միայն ԱՄՆ, այլև եվրոպական երկրներ և Թուրքիա: Պենտագոնի ներկայացուցիչները նշում են, որ Չեղրեղանլիին և այլ իրանցիների հետ հանդիպել են խոսելու, այլ ոչ թե Թեհրանին հակադրվելու համար: Իր հերթին Չեղրեղանլին նշում է, որ ստանում է ամերիկյան կողմի ֆինանսական աջակցությունը: Նրա հայացքների մեջ առանցքային տեղ է զբաղեցնում Իրանը՝ որպես ֆեդերատիվ պետության գաղափարը[3]:

Միաժամանակ Չեղրեղանլին ենթադրում է իր այդ գաղափարը իրականացնել թյուրքական աշխարհի համատեքստում: Նա հայտարարում է, որ Հարավային Ադրբեջանի հարցը ունի ռազմավարական նշանակություն թուրքական աշխարհի ապագայի համար: Իրանական համալսարաններում սովորում է 1.650.000 ուսանող, որոնց կեսը ադրբեջանցիներ են: Թուրքական աշխարհի ճանապարհը անցնում է Թավրիզով[4]:

---

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս **Իսկանդարյան Գ.,** Հյուսիսային Իրանում վերջին զարգացումների շուրջ http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=536 (մուտք՝ 24.02.22)

[3] Տե՛ս **Olson R.,** The Azeri Question and Turkey-Iran Relations 2000-2002, Nationalism and Ethnic Politics, Vol. 8, p.79.

[4] Նույն տեղում, էջ 76:

Թեհրանի վրա ճնշում գործադրելու նպատակով 2000-ականների սկզբին ԱՄՆ Կոնգրեսում քննարկվում էր Ատրպատականի անկախացման հարցը: Որպես դրան աջակցող հանգամանք նշվում էր Ադրբեջանի և Իսրայելի ռազմական համագործակցությունն ու Բաքվի կողմից Իրանին ներկայացվող տարածքային պահանջները: Բացի Ատրպատականից՝ ԱՄՆ ակտիվ աշխատում էր նաև Սիստան և Բելուջիստան նահանգի ուղղությամբ՝ բարձրացնելով տեղի բնակչության իրավունքների պաշտպանության հարցը:

2003 թ. Բաքվում սկսեց հեռարձակվել «Հարավային Ադրբեջանի ձայնը» ռադիոհաղորդումը, որի կազմակերպիչները Թուրքիան և Ադրբեջանն էին: Շարժման առաջնորդ Չեղրեղանին փոխեց իր ազգանունը և դարձավ Չեղրեղանլի: Վերջինս ներգրավված էր ԱՄՆ-ի ակտիվ հակաիրանական քաղաքականության մեջ: 2005 թ. Թուրքիայի աջակցությամբ բացվեց «Հարավային Ադրբեջան» հեռուստալիքը, իսկ 2006 թ. Շվեդիայում բացվեց «Օյանիշ» ալիքը[1]:

2003 թվականին ադրբեջանցիների զանգվածային ցույցերի ալիքը տարածվեց Իրանի հյուսիս-արևմուտքում: Նույն թվականի հուլիսին ցույցերին մասնակցած 19-ամյա ադրբեջանցի ուսանողը հրապարակային մահապատժի ենթարկվեց:

Այդ օրերին ադրբեջանական մամուլի էջերում հայտնվեցին այսպիսի վերնագրեր. «Հարավային Ադրբեջանում ազգային զարթոնք է», «Թեհրանի ռեժիմը միջոցների մեջ խտրություն չի դնում», «Միասնական Ադրբեջանի մեծ հերոսները»: Հարավային Ադրբեջանի ազգային շարժման ղեկավար Մահմուդալին մամուլի ասուլիսում հայտարարեց, թե «հավանական է, որ մոտակա 18 ամիսներին Իրանը վերածվի ֆեդերալ պետության»[2]: Չեղրեղանլին և նրա կողմնակիցները ցանկանում էին, որ Հարավային Ադրբեջանը լիակատար անկախություն ձեռք բերի, սակայն նրանք հասկանում են, որ «Արևմուտքը չի պաշտպանում Իրանի մասնատման գաղափարը»: Նրանց համար «տվյալ փուլում» լավագույն տարբերակը իրանական ֆեդերացիայի կազմում ադրբեջանցի թյուրքերի պետության ստեղծումն էր: Հարավային ադրբեջանցիների առաջնորդն այդ հեռանկա-

---

[1] Տե՛ս **Իսրայելյան Ա.,** Իրանի տարածքային ամբողջականությանը սպառնացող մարտահրավերն Իսլամական հեղափոխությունից հետո, էջ 347, Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների պարբերական ժողովածու), N12, Եր., 2016 http://ysu.am/files/irani-taracqayin-amboxjakanutyuny.pdf (մուտք՝ 04.04.22)

[2] Նույն տեղում:

ը տեսնում էր ԱՄՆ-ի մշակած՝ Իրանի ժողովրդավարացման ծրագրերի «պատմական հնարավորության» համատեքստում[1]:

Իրանի և Ադրբեջանի հարաբերությունները 2006 թ. լարվածության նոր շրջափուլ թևակոխեցին: 2006 թվականի սկզբից աճեց Իրանի այն քաղաքացիների թիվը, ովքեր ժամանում էին Բաքու և Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն: Ադրբեջանական լրատվամիջոցները տարբեր թվեր էին նշում՝ 12-ից մինչև 50 հազար մարդ: Հատկանշական է, որ Ադրբեջանում Իրանի դեսպան Աֆշար Սոլեյմանին 2006 թվականի փետրվարին նշում էր. «Մենք հակահարված կտանք ագրեսորներին, իսկ մեր 40-50 հազար քաղաքացիների Ադրբեջան տեղափոխելը ոչինչ չի փոխի»[2]:

2006 թ. «Հարավային Ադրբեջանի» ազգային վերածնության շարժման եվրոպական ներկայացուցչությունը հայտարարեց, որ ստեղծվել է Ազգային-ազատագրական բանակը (ՀԱԱԱԲ), որ պայքար է մղելու ընդհուպ ադրբեջանցիների ազգային իրավունքների վերականգնման համար: «Իրանի կառավարությունը Սահմանադրության 15-րդ հոդվածի հիման վրա պետք է ապահովի ադրբեջանցիներին հարազատ լեզվով ուսում ստանալու, թերթ բացելու, ադրբեջանական լեզվով 24-ժամյա հեռարձակմամբ հեռուստաընկերություն ունենալու, ադրբեջանաբնակ շրջաններում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության իրավունքը, պետք է լուծի Հարավային Ադրբեջանի տնտեսական խնդիրները, ազատ արձակի բողոքի ցույցերի ժամանակ ձերբակալված ադրբեջանցիներին և չխոչընդոտի Ադրբեջանի Ազգային հերոս Աբաբեկ Հուրեմի ծննդյան օրվան նվիրված միջոցառմանը ադրբեջանցիների մասնակցությանը, որը կայանալու է հունիսի 29-ին»: ՀԱԱԱԲ-ն նաև պահանջել է պատժել նրանց, ովքեր կրակել են Իրանի ադրբեջանաբնակ քաղաքներում անցկացված բողոքի ցույցի մասնակիցների վրա, հայտնում է ԱՊԱ-ն[3]:

2006 թ. ԱՄՆ-ն սաստկացրեց ճնշումն Ադրբեջանի վրա՝ ապագա հակահրանական կոալիցիային միանալու համար: Ապրիլի վերջին ԱՄՆ վարչակազմն անսպասելիորեն Ի. Ալիևին հրավիրեց ԱՄՆ: Այս հրավերը, որին նա սպասում էր նախագահ դառնալու առաջին օրից, անհանգստացրեց Իրանի իշխանություններին: Ի.Ալիևի ԱՄՆ այցի նախօրեին Բաքու ժամանեց Իրանի պաշտպանության նախարար Մուստաֆա Մուհամմադ Նաջարը: ԱՄՆ-ից վերադառնալուց մի քանի օր անց Ի.Ալիևը

---

[1] Ազգային զարթոնքի մեխանիկան https://www.aravot.am/2003/07/05/799828/ (մուտք՝ 12.01.22)

[2] Տե՛ս **Юнусов А.,** Азербайджан в 2006 г.: Некоторые итоги, стр. 14. КАВКАЗ - 2006. Ежегодник Кавказского института СМИ, Ер., 2008.

[3] Տե՛ս Իրանի Հարավային Ադրբեջանի Ազգային-ազատագրական բանակ է ստեղծվել https://www.panarmenian.net/arm/news/18247/ (մուտք՝ 21.03.22)

Բաքվում հանդիպեց Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադին: Այս հանդիպումների ժամանակ իրանական կողմը միանշանակ զգուշացրեց Ի.Ալիևին այն գործողությունների մասին, որոնք կձեռնարկվեն Ադրբեջանի դեմ, եթե ամերիկացիներն օգտագործեն նրա տարածքը:

2006թ. մայիսի 12-ին «Իրան» պետական թերթում ադրբեջանցիներին վիրավորող ծաղրանկար հրատարակվեց: Իրանի պաշտոնական իշխանությունների քաղաքականությունից ադրբեջանցիների դժգոհությունն այդ ժամանակ այնքան մեծ էր, որ մեկ ծաղրանկարը բավական էր հզոր պայթյունի համար: Օրեր շարունակ գրեթե ողջ Հարավային Ադրբեջանն ընդգրկված էր վրդովված ադրբեջանցիների բողոքի զանգվածային ցույցերով:

Իրանի ադրբեջանախոս շրջաններում պարսիկների մեծամասնությունը, հատկապես քաղաքացիական ծառայողները գերադասեցին շտապ լքել իրենց աշխատանքը, ինչը ժամանակավորապես կաթվածահար արեց բազմաթիվ հիմնարկների գործունեությունը: Իրանի իշխանությունները արագ գիտակցելով ստեղծված իրավիճակի վտանգավորությունը, ներողություն խնդրեցին ադրբեջանցիներից՝ միաժամանակ ձերբակալելով թերթի խմբագրին և հեղինակին:

Միաժամանակ նախագահ Ահմեդինեժադը հանդես եկավ հայտարարությամբ, որ տեղի ունեցած անկարգությունների հետևում կանգնած են օտարերկրյա հատուկ ծառայությունները՝ հիմնականում ամերիկյան և իսրայելական: Միաժամանակ իրանական իշխանությունները բացեիբաց հայտարարեցին, որ ցույցերի նախաձեռնողներից մեկն է «Հարավային Ադրբեջան»-ի Ազգային վերածնունդ շարժման ղեկավար Մահմուդալի Չեղրաղանլին, քանի որ Թավրիզի և այլ հանրահավաքների ժամանակ Իրանի հյուսիսի քաղաքներում ցուցարարները բղավել են նրա անունը[1]:

Ըստ «Եվրասիա» լրատվական գործակալության, Թավրիզում ցույցի էին դուրս եկել Զենջանում՝ 100.000, Խոյում՝ 50.000, Ուրմիայում՝ 200.000 ադրբեջանցիներ: Վերջիններս նույնիսկ գրավեցին տեղական հեռուստատեսությունը, որի շենքի վրա բարձրացվեց ադրբեջանական դրոշը: Սակայն կարճ ժամանակահատվածում ոստիկանությունը հարթեց առաջացած խնդիրը և դուրս վտարեց ցուցարարներին հեռուստատեսության շենքից: Հյուսիսային Իրանի գրեթե բոլոր քաղաքներում մտցվեցին զորամիավորումներ՝ հիմնականում բաղկացած պարսիկներից: Մտավախություն կար, թե ադրբեջանցի զինվորականները համապատասխան պահին չեն ենթարկվի հրամաններին: Ադրբեջանական տեղեկատվության համաձայն ձերբակալվեց 3000 մարդ: Մայիսի 26-ին Փարսաբադ քաղաքում

[1] Նույն տեղում:

ամբոխը հարձակվեց և հրդեհեց մի քանի բանկեր, իսկ բնակչությունը, որպես բողոքի ակցիա, դուրս եկավ մի շարք դպրոցներում պարսկերենի ուսուցման դեմ[1]:

Բաքվում, ըստ Day.Az. կայքի, ցուցարարները ԻԻՀ դեսպանատան առջև այրեցին Իրանի դրոշը, ինչպես նաև սվաստիկան դեմքին Ահմադինեժադի ծաղրանկարը: Միաժամանակ, Իրանում ցուցարարները պահանջեցին ադրբեջաներենը հռչակել պաշտոնական լեզու: Իր աջակցությունը հայտնեց Հոլանդիայում գտնվող «Ադրբեջանի ընկերների կազմակերպությունը»[2]:

2010 թ. հունիսին «Հարավային Ադրբեջանի» (GAMOH)՝ «Հյուսիսային Ադրբեջանում» բնակվող ազգային քաղաքական գործիչները Բաքվում գաղտնի հավաք անցկացրեցին, որի ընթացքում ընդունվեց «Բաքվի հռչակագիրը»: Հռչակագրում նշվում էր. «Ադրբեջանի ազգային ազատագրական շարժման գործիչները, հանուն ադրբեջանցիների ազգային-մարդկային իրավունքների գործող կառույցները և անձինք պետք է ճիշտ գնահատեն սկսվելու շեմին գտնվող պայքարի նոր փուլը և հնարավորինս լավ օգտվեն ստեղծված նոր իրավիճակից»: «Հյուսիսային Ադրբեջանում» GAMOH-ի ներկայացուցիչ Աղրը Գարադաղլը անընդունելի է համարել արտասահմանյան որևէ երկրի և օտար ուժերի՝ «Հարավային Ադրբեջանի» գործոնն իրենց նպատակներին ծառայեցնելը: Վերջինս նշում էր նաև, որ անցյալ 100 տարիների փորձը ցույց է տալիս, որ միայնակ տարվող ազգային քաղաքական պայքարը դրական արդյունք չի տվել: «Նկատի ունենալով դա, Հարավային Ադրբեջանի թուրքերը պետք է կապեր ստեղծեն Իրանում ապրող այլ ազգերի դեմոկրատական և ազգային քաղաքական իրավունքների համար պայքարող կազմակերպությունների հետ և նրանց հետ միասին պայքար մղեն կենտրոնական կառավարության և իշխող շովինիստական պարսկական համակարգի դեմ»[3]: Այսպիսով, 1990-ական թվականների կեսերից «Հարավային Ադրբեջան» եզրույթի քաղաքական շահարկումը թևակոխեց նոր շրջափուլ: Հիմնախնդրի միջազգայնացումը էլ ավելի սրեց Իրան- Ադրբեջան հարաբերությունները: Միանգամից ուրվագծվեցին երեք հիմնական հակասական մոտեցումներ այդ խնդրի հետ կապված: Մի կողմից Իրանը ձգտում էր իր նախկին հյուսիսային խա-

---

[1] Տե՛ս **Իսկանդարյան Գ.,** Հյուսիսային Իրանում վերջին զարգացումների շուրջ http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=536 (մուտք՝ 24.02.22)

[2] Նույն տեղում:

[3] Ադրբեջանում հակաիրանական հավաք է տեղի ունեցել https://armenpress.am/arm/news/607650/D4B1D5A4D680D5A2D5A5D5BBD5A1D5B6D5B8D682D5B4_D5B0D5A1D5AFD5A1D5ABD680D5A1D5B6D5A1D5AFD5A1D5B6_D5B0D5A1D5BED5A1D684_D5A7_D5BFD5A5D5B2D5AB_D5B8D682D5B6D5A5D681D5A5D5AC.html (մուտք՝ 12.01.22)

նությունները վերադարձնել, մյուս կողմից Ադրբեջանի հանրապետությունը ձգտում էր կյանքի կոչելու «Մեծ Ադրբեջանի» ծրագիրը: Երրորդ մոտեցումը Արևմուտքին է, որը դիտարկում էր Իրանի անկումը Սիրիայի և Իրաքի օրինակով:

«ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ» ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում լարվածությունը արտահայտվում էր նաև մշակութային ժառանգության խնդրում: Ադրբեջանական կողմը պարբերաբար յուրացնում է իրանական մշակույթի նմուշները, իրանական մշակույթի գործիչներին, ինչպես օրինակ՝ իրանցի բանաստեղծ Նիզամիին: 2013 թ. սեպտեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գծով Իրանի ազգային հանձնաժողովի գլխավոր քարտուղար Մոհամմադ Ռեզա Սայիդաբադին բողոքի նամակ էր հղել ադրբեջանցի իր գործընկեր Գյունայ Աֆենդիևին Նիզամի Գյանջավիի ինքնության և ժառանգության պատկանելության հարցով: Մինչ այդ ադրբեջանական կողմը ձեռնարկել էր Գյանջայում Նիզամիի գերեզմանի վրայից պարսկերեն գրությունները ադրբեջաներենով փոխարինելու նախաձեռնություն: Իրանցի պաշտոնյայի հայտարարությունում նշվում էր, որ «Ադրբեջանի կողմից պարսկալեզու բանաստեղծ Նիզամի Գյանջևի ինքնության և գրական ժառանգության ոչնչացումն անընդունելի է»[1]:

Նույնիսկ ադրբեջանցի գիտնական, պրոֆեսոր Սիրիուս Աշեմովը նշել էր, որ. «Պատմական փատերը ներկայացնելիս մենք պետք է քաջություն ունենանք ասելու, որ Արան և Շիրվան տարածքները, որոնց վրա 1918 թ. ստեղծվել է Ադրբեջան անունով պետությունը, Իրանի մաս են կազմել, հետևաբար, այն ժամանակ, երբ Նիզամի Գյանջևին գրում էր «Համսե» պոեմը, Գյանջա շրջանը և Նիզամին իրանական են եղել: Ադրբեջանն ընդամենը 20-ամյա պատմություն ունի, հետևաբար, 800 տարի առաջ ստեղծագործած բանաստեղծը չի կարող ադրբեջանցի համարվել»[2]:

Ամենավերջին հավակնությունները ադրբեջանցիների իրանական մշակույթի նկատմամբ դրսևորվեցին Ադրբեջանի խորհրդարանի պատգամավորների երևանյան այցի ընթացքում: Եվրանեսթ խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում Երևան այցելած խորհրդարանականները այցելել էին Կապույտ մզկիթ, լուսանկարվել ու գրել էին, որ 18-րդ

[1]Տե՛ս Իրանը Նիզամիի հետ կապված բողոք է հղել Ադրբեջանին https://armenpress.am/arm/news/733235 (մուտք՝ 12.01.22)

[2] Նույն տեղում:

դարի կառույցը Հայաստանի մայրաքաղաքում պահպանված միակ ադրբեջանական հուշարձանն է: Մեջլիսի անդամները նաև հույս էին հայտնել, թե այդ մզկիթի իրական տերերը շուտով կկարողանան այնտեղ աղոթել[1]: Ի պատասխան այս հայտարարության Հայաստանում Իրանի դեսպանությունը 3 լեզուներով գրել էր. «Պատմությամբ հետաքրքրվողները շատ լավ ընկալում են ավելի քան երկու հարյուրամյա վաղեմությամբ պարսկական արձանագրություններ ունեցող Կապույտ մզկիթի ճարտարապետության բարձր մշակութային արժեքը և ինքնությունը: Մեծ բարեբախտություն է, որ այս պատմական արձանագրությունները պահպանվել են»[2]:

Ադրբեջանական կողմից համար անընդունելի էր Իրանի կրոնական դերակատարությունը Ադրբեջանում: Դա էր պատճառը, որ ադրբեջանական իշխանությունները քայլեր էին ձեռնարկում կրոնական ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ: Ադրբեջանում 2009 թ. ընդունված օրենքով արգելվեց օտարերկրացի գիտնականներին, նաև արտասահմանում կրթություն ստացած Ադրբեջանի քաղաքացի հանդիսացող հոգևորականներին կրոնական քարոզչություն իրականացնել երկրում: Նույնիսկ Ադրբեջանի Մեջլիսի պատգամավոր Ֆազայիլ Աղամալին հայտարարեց, որ ամենամեծ սպառնալիքը կրոնի ոլորտում սպասվում է Իրանից և պետք է Ղոմ քաղաքում կրոնական կրթություն ստացած ադրբեջանցի հոգևորականների գործունեության նկատմամբ վերահսկողություն սահմանել[3]:

2012 թ. Ադրբեջանում սկսեցին լրջորեն խոսել երկիրը Հյուսիսային Ադրբեջան վերանվանելու հարցի մասին: «Միասնական Ադրբեջան» կուսակցության Ժողովրդական ճակատի առաջնորդ, պատգամավոր Գուդրաթ Հասանգուլիևը խորհրդարանական նիստում առաջարկում է Ադրբեջանի Հանրապետությունը վերանվանել Հյուսիսային Ադրբեջանի Հանրապետություն: Սա, պատգամավորի կարծիքով, համարժեք պատասխան կլինի այն քայլերին, ինչը Բաքվում երբեմն անվանում են «Ադրբեջանի Հանրապետության դեմ Իրանի շարունակվող թշնամական գործողություններ»: Հասանգուլիևը մատնանշում է այն փաստը, որ իրանցի քաղաքական գործիչներից մեկը բարձրացրել է 19-րդ դարի սկզբին Պարսկաստանի և Ռուսաստանի միջև կնքված Գյուլիստանի և Թուրքմենչայի պայ-

---

[1] Տե՛ս Կապույտ մզկիթի հոգևորականին զայրացրել են ադրբեջանցի պատգամավորների գրառումները https://www.azatutyun.am/a/31721296.html (մուտք՝ 22.03.22)

[2] Նույն տեղը:

[3] Տե՛ս **Իսրայելյան Ա.,** Իրանի կրոնական քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ (2010-2016թթ.), էջ 205 http://ysu.am/files/irani-kronakan-qaghaqakanutyun.pdf (մուտք՝ 25.03.22)

մանագրերը չեղյալ հայտարարելու հարցը՝ ժամանակակից Ադրբեջանի Հանրապետության տարածքը Իրանին միացնելու նպատակով[1]:

2015 թ. մեկ անգամ ևս Իրանի ադրբեջանցիների կողմից կազմակերպվեցին զանգվածային ցույցեր: Ադրբեջանցիների բողոքի գործողությունները սկսել էին երկրի պետական հեռուստատեսության ալիքներից մեկով հեռարձակված երգիծական մի ծրագրից հետո, որտեղ ծաղրի էին ենթարկվել ադրբեջանցիները և ադրբեջաներենը: Հաղորդման գլխավոր հերոսները՝ ադրբեջանական մի ընտանիքի անդամները, հյուրանոցի աշխատակցին բողոքում էին իրենց սենյակից եկող անտանելի հոտից՝ չհասկանալով, որ այդ բուրմունքի իրական աղբյուրը հենց իրենք են[2]:

Թեև Իրանի հեռուստատեսության ղեկավարությունը հայտարարում է, որ միլիոնավոր ադրբեջանցիների վրդովմունքի պատճառ դարձած հեռուստահաղորդման հեռարձակումը դադարեցվել է, իսկ դրա հեղինակները հեռացվել են աշխատանքից, այնուամենայնիվ ազգային կարգախոսների ներքո փողոց դուրս եկան Թավրիզի, Ուրմիայի, Մարաղայի, մի շարք այլ խոշոր ադրբեջանաբնակ քաղաքների բնակիչներ[3]:

2015թ. Իրանի Մեջլիսում քննարկման ներկայացվեց մի նախաձեռնություն, որով նախատեսվում էր Արևելյան Ատրպատական նահանգը ենթարկել վարչական բաժանման և կազմավորել նոր նահանգ՝ Արասբարան անվամբ[4]:

Հետաքրքրական է, որ վերջին տարիներին Իրանի ադրբեջանցիների անջատողականությունը լրջորեն խրախուսվում է Թուրքիայի կողմից: «Հարավային Ադրբեջան» և «Հյուսիսային Ադրբեջան» արտահայտությունները օգտագործվում են թուրքական առանցքային լրատվամիջոցներում, ինչպիսիք են Hürriyet-ը, Milliyet-ը, Süzcü-ն, Yeniçağ-ը, Habertürk-ը և Anadolu պետական լրատվական գործակալությունը: Դրանք օգտագործվում են ինչպես քաղաքական գործիչների, վերլուծաբանների և առանձին անհատների մեջբերումներում, այնպես էլ հրապարակումների մեջ, որոնք լիովին համապատասխանում են հրապարակումների խմբագրական քաղաքականությանը: Սակայն պետք է նշել, որ «Հյուսիսային Ադր-

---

[1] Азербайджан как две страны одного народа https://www.svoboda.org/a/24475332.html (մուտք՝ 25.03.22)

[2] Բողոքի բազմահազարանոց ակցիաներ Իրանի ադրբեջանաբնակ քաղաքներում https://www.azatutyun.am/a/27357979.html (մուտք՝ 26.03.22)

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

բեջան» թեզը, ի տարբերություն «Հարավային Ադրբեջան» ձևակերպման, հազվադեպ է օգտագործվում[1]:

Ժամանակակից թուրքական մամուլում շրջանառվում են Ադրբեջանի ղեկավարների զանազան պանթուրքիստական հայտարարություններ, որոնցում, օրինակ, ասվում է. բոլորն ապրում են այն հույսով, որ մի օր Թուրքիայից եկած եղբայրներն իրենց կփրկեն»: Կամ մեկ այլ օրինակ՝ «-Հարավային Ադրբեջանում ապրող թուրքերը պայքարում են մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքի համար» և այլն[2]:

Դրա վկայությունը 2020 թ. նոյեմբերի 10-ին Բաքվում անցկացված շքերթի ընթացքում Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ելույթն էր: Էրդողանը իր ելույթում կարդաց Իրանի ու Ադրբեջանի սահմանով անցնող Արաքս գետի մասին անջատողական թեմայով մի դասական՝ պանթուրանիստական բովանդակությամբ բանաստեղծություն[3]: «Արազ» բանաստեղծությունն ակնարկում էր Կովկասի թաթարներին (Ադրբեջան) և Իրանի Ատրպատական նահանգներին բաժանող Արաքս գետը, որը բաժանում է երկու այսպես կոչված «Ադրբեջանները» և որ դրանք պետք է միավորվեն ու դառնան մեծ Ադրբեջան: Իհարկե Էրդողանի բուն նպատակը և միտումը այդ բանաստեղծությունը կարդալուց Մեծ Թուրան կայսերության ստեղծում է՝ Նորօսմանական նկրտումների հովանու ներքո[4]: Շքերթից հետո Իրանում Թուրքիայի դեսպան Դերյա Էրսը կանչվեց Իրանի արտաքին գործերի նախարարություն: Իրանի ԱԳ նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Սաիդ Խատիբզադեն հայտարարում

---

[1] Использование в турецкой прессе ложных топонимов «Южный и Северный Азербайджан» https://orbeli.am/ru/post/487/2020-07-02/%D0%98%D1%81%D0%BF%D0%BE%D0%BB%D1%8C%D0%B7%D0%BE%D0%B2%D0%B0%D0%BD%D0%B8%D0%B5+%D0%B2+%D1%82%D1%83%D1%80%D0%B5%D1%86%D0%BA%D0%BE%D0%B9+%D0%BF%D1%80%D0%B5%D1%81%D1%81%D0%B5+%D0%BB%D0%BE%D0%B6%D0%BD%D1%8B%D1%85+%D1%82%D0%BE%D0%BF%D0%BE%D0%BD%D0%B8%D0%BC%D0%BE%D0%B2+%C2%AB%D0%AE%D0%B6%D0%BD%D1%8B%D0%B9+%D0%B8+%D0%A1%D0%B5%D0%B2%D0%B5%D1%80%D0%BD%D1%8B%D0%B9+%D0%90%D0%B7%D0%B5%D1%80%D0%B1%D0%B0%D0%B9%D0%B4%D0%B6%D0%B0%D0%BD%C2%BB (մուտք՝ 26.03.22)

[2] Նույն տեղում:

[3] Էրդողանի պանթուրանիստական հոխորտանքը Բաքվում կսթափեցնի՞ Իսլամական Իրանին https://www.aravot.am/2020/12/13/1158784/ (մուտք՝ 24.03.22)

[4] Իրանի արտգործնախարար Մոհամադ Զավադ Զարիֆը նոյեմբերի 11-ին Թվիթերում պատասխանել էր Թուրքիայի նախագահ Ռեջեբ Թայիփ Էրդողանի՝ գրելով, թե արդյոք Էրդողանը չի հասկացե՞լ, որ Ադրբեջանի ինքնիշխանության դեմ ուղղված հայտարարություն է արել: «Ոչ ոք չի կարող խոսել մեր սիրելի Ատրպատականի մասին», գրել էր Իրանի արտաքին գործերի նախարարը: Էրդողանի պանթուրանիստական հոխորտանքը Բաքվում կսթափեցնի՞ Իսլամական Իրանին https://www.aravot.am/2020/12/13/1158784/ (մուտք՝ 24.03.22)

է, որ «Դեսպանի հետ հանդիպման ընթացքում Եվրասիայի հարցերով արտաքին գործերի նախարարության գլխավոր տնօրենն ընդգծել է, որ հողերի նկատմամբ նկրտումների և ռազմատենչ կայսրությունների դարաշրջանը վաղուց ավարտվել է: Իրանի Իսլամական Հանրապետությունը թույլ չի տա որևէ մեկին միջամտել նրա տարածքային ամբողջականությանը, և, ինչպես ցույց է տալիս պատմությունը, Իրանը փոխզիջման չի գնա իր ազգային անվտանգության հարցում»[1]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը շարադրված փաստերը անվիճելիորեն ցույց են տալիս, որ Իրանական Ադրբեջանի հիմնահարցը, Ադրբեջանի Հարնապետության անկախացումից հետո, իր իսկ ձեռամբ դարձել է աշխարհաքաղաքական լրջագույն գործոններից մեկը: Հիմնախնդիրը անխուսափելիորեն հարկ է դիտարկել մի քանի փուլերով, ինչն էլ արվել է հոդվածում:

Առաջին փուլը Արևելյան Այսրկովկասում մուսուլմանական նոր պետության հանդես գալն էր, որը հեռահար քաղաքական նկրտումներով անվանադրվեց Ադրբեջան անունով: Անվանումների նման խառանշփոթի ստեղծումն Ադրբեջանի Հանրապետության համար ուներ և ունի քաղաքական-գործնական նշանակություն:

Երկրորդ փուլում, օգտվելով ԽՍՀՄ-ի կողմից իրականացվող Մերձավորարևելյան արտաքին քաղաքականությունից, Ադրբեջանի ղեկավարությունը շրջանառության մեջ մտցրեց երկու՝ «Հարավային Ադրբեջան» և «Հյուսիսային Ադրբեջան» եզրույթները՝ «Մեծ Ադրբեջան»-ի գաղափարը կենսագործելու ակնկալությամբ: Դրա համար ամենապատեհ առիթը Հայրենական մեծ պատերազմն էր, որի ընթացքում ԽՍՀՄ ղեկավարության ներքո Ադրբեջանի կոմունիստական ղեկավարությունը Իրանական Ադրբեջանում հրահրեց ազգայնական տրամադրություններ, ինքնավարություն ձեռք բերելու և «երկու Ադրբեջանները» միավորելու նպատակով:

Երրորդ փուլն ընդգրկում է հետխորհրդային ժամանակաշրջանը: ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանի բոլոր նախագահները ուղղակի կամ անուղղակի մշտապես աջակցել են Իրանի տարածքում ապրող ադրբեջանցիների անջատողական քայլերին: Ընդ որում, այս գործոնը դարձել է նաև Թուրքիայի պանթյուրքիստական քաղաքականության առանցքը, ինչի մասին վկայում են նաև թուրքական տարբեր պաշտոնյաների, այդ թվում նաև նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հրապարակային ելույթները:

---

[1] Թուրքիայի դեսպանը կանչվել է Իրանի ԱԳՆ Էրդողանի հայտարարությունների կապակցությամբ https://armenpress.am/arm/news/1037559.html (մուտք՝ 23.03.22)

Эдуард Зограбян, Термин “"Южный Азербайджан” в контексте политической манипуляции Азербайджана - В мае 1918 года, благодаря благоприятной геополитической ситуации, впервые в истории Закавказья искусственно образовалось государство под названием Азербайджан.

С самого начала оно выдвинула территориальные претензии ко всем соседним странам без исключения, в том числе и к Ирану.

Это новое созданное государство, расположенное на Северно-Востоной части Кавказа восприняло название Азербайджан. Это название было транскрибировано на арабском языке историческим именем Атурпатеном Северо-Западного края Ирана. эти названия вызвали беспорядок и Азербайджанская Республика подготовил почву для обоснования исторического права на создание тюркского государства в этом регионе Ирана и реализации своих территориальных оккупационных намерений.

Эту проблему Советский Азербайджан попытался решить в сфере внешней политики Советского Союза. Выражением идеологического обоснования этого является выдуманная руководством Азербайджана фраза "мидиская" и сформированная на ее основе теория «Два Азербайджана".

В обращение был введен термин "Южный Азербайджан".

Все советские и постсоветские власти Азербайджана, манипулируя термином Южный Азербайджан, стремились использовать его для создания так называемого "Великого Азербайджана".

Южный Азербайджан стал также предметом политической манипуляции для западных государств, для того, чтобы оказать давление на Иран и спровоцировать сепаратистские действия.

Eduard Zohrabyan, The Term "South Azerbaijan» in the Political Manipulation of Azerbaijan - A statehood called Artificial Azerbaijan for the first time in the history was formed in Transcaucasia in May 1918, due to the favorable geopolitical situation.

From the very beginning he put forward territorial claims to all neighboring countries without exception, including Iran.

This newly-established country which is in the North-Eastern part of Caucasus perceived the title Aserbaijan. This title was transcribed in Arabic by the historical name Aturpaten of the North-Western part of Iran. These titles caused the confusion and AUR prepared the ground for the justification of the historical right to establish a Turkic state in this region of Iran and the implementation of his territorial occupational remarks.

Soviet Azerbaijan tried to solve this problem in the sphere of the foreign policy of the Soviet Union. The expression of the ideological justification for

this is the phrase "midian" invented by the Azerbaijan leadership and the theory "two Azerbaijans" formed on its basis.

The term "South Azerbaijan" was introduced into circulation.

All the Soviet and post-Soviet authorities of Azerbaijan, manipulating the term South Azerbaijan, sought to use it to create the so-called "Great Azerbaijan".

South Azerbaijan has also become the subject of political manipulation for Western states in order to put pressure on them and provoke separatist actions.

Ուղարկվել է խմբագրություն 08.11.2022թ.
Գրախոսվել է 10.11.2022թ.
Ստորագրվել է տպագրության 14.11.2022թ.